



## 19.05.2014

2014թ. մայիսի 17-ի ժամը 18:00-ից <<Էրեբունի>> արգելոց-թանգարանը 10-րդ անգամ միացավ Եվրոպային՝ մինչև կեսգիշեր ընդունելով հազարավոր այցելուների: Հոբելյանական 10-րդ Գիշերվա համար 5 միջոցառումներից մշակված ծրագիրը միաժամանակ մեկ սցենարի մեջ էր, որը կրում էր ԻԿՕՄ-ի կողմից 2014-ի համար հայտարարված <<Հավաքածուները ստեղծում են կապեր>> խորագիրը՝

հասցեագրված ամենատարբեր հետաքրքրություններ և տարիքային խմբերի պատկանող այցելուների: Ինչպես նախորդ տարի, թանգարանի այցելուների կողքին էր Երևանի քաղաքապետարանը, ում աջակցությամբ ժամը 19:00-ից մինչ կեսգիշեր գործեց Հանրապետության հրապարակ-Էրեբունի թանգարան անվճար երթուղին՝ խրախուսելով և դյուրինացնելով, մասնավորապես երևանցիների, այցելությունը մայրաքաղաքի բնօրրան: Ինչպես միշտ, հաշվի առնելով այցելուների մեծ հոսքերը ոչ միայն թանգարան՝ այլ նաև Էրեբունիի ամրոցի միջնաբերդ, արգելոց-թանգարանի տարածքում լրացուցիչ ուժեղացված ծառայություն իրականացրեցին ՀՀ ոստիկանության պետական պահպանություն իրականացվող ոստիկանները՝ ապահովելով ոչ միայն հասարակական կարգի, այլ նաև հնավայրի անխաթար պահպանություն: Առավոտից մինչև ուշ կեսգիշեր ոտքի վրա էր արգելոց-թանգարանի ողջ աշխատակազմը:

Թեև Գիշերվա մեկնարկը խորհրդանշականորեն տրվելու էր արևամուտից, սակայն մայիսի 17-ի վաղ առավոտից Էրեբունին սկսեց ընդունել ՀՀ մարզերից ժամանող դպրոցական խմբերի՝ ուսուցիչների և ծնողների ուղեկցությամբ: Բազմաթիվ խմբային այցելուների շարքում առանձնապես աչքի ընկավ Բյուրեղավանի դպրոցը, որն Էրեբունի էր եկել տոնական հատուկ ծրագրով և տրամադրությամբ: Արին բերդի բարձրունքից բյուրեղավանցի դպրոցականները բաց թողեցին տոնական փուչիկներ՝ այսպեսպես ողջունելով 10-րդ Թանգարանային գիշերը մայրաքաղաքում:

Ծնողների ուղեկցությամբ Էրեբունի այցելած ցածր դպրոցական տարիքի երեխաները ժամեր

շարունակ անցկացրեցին արգելոց-թանգարանի ուսումնական պեղավայրում՝ դիտելով պատանի հնագետների ցուցադրական դասը պեղումների հրապարակում: Այդ պեղումները հետաքրքրեցին նաև շատ մեծահասակների:

Ծրագրի շրջանակում 3 անգամ ցուցադրվեց <<Աշխարհը Բրիտանական թանգարանում>> ճանաչողական ֆիլմը, որի դիտորդները հիմնականում ուսանողներն ու մեծահասակներն էին: Ֆիլմը գլխավորապես հետաքրքրեց մշակութային մասնագիտական կրթություն ստացողներին և, մասնավորապես, հնագետներին ու արվեստի պատմաբաններին:

Էրեբունիում Թանգարանների գիշերը երաժշտական դարձրեց <<Վան>> ազգագրական երգ ու պարի համույթը՝ Անդրանիկ Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Թանգարանի ներքին բակում և առջևի հարթակում հնչեցին <<Ամռան գիշեր>>, <<Աշնան գիշեր>>, <<Ճախարակ>> երգերը, իսկ <<Ուրֆանե>>, <<Սեբաստիո>>, <<Զընգըրթա>> պարային համարներում ուղղակիորեն ներգրավվեցին նաև այցելուները՝ համույթի հետ կազմելով պարային մեկ շրջան:

Մեծ թվով այցելուների Էրեբունի էր բերել նաև 1-ին անգամ ցուցադրվող ագաթե կոճակի (մ. թ. ա. 8-րդ դար) 1-օրյա ցուցադրությունը: Շատերին էր հետաքրքրում, թե ինչպիսի՞ն է գրեթե 3-հազարամյա կոճակը:

Ավելի ուշ, ժամը 21:00-ից Էրեբունին միացավ համացանցում օն-լայն ռեժիմով հասանելի <<Գեղագիտակ>> նախաձեռնությանը՝ մինչև կեսգիշեր դիտելով 10-րդ Թանգարանային գիշերվա հետաքրքիր կադրեր՝ մեկտեղված մեկ ալբոմում: Գեղադիտակը, որը հասանելի է [http://prod.kinevision.fr/opes/display\\_wall\\_stack/349?user=musee&pwd=2014](http://prod.kinevision.fr/opes/display_wall_stack/349?user=musee&pwd=2014) հասցեում, ներկայացրել է հարյուր-հազարավոր կադրեր Եվրոպայի թանգարաններից: Սնարթֆոններ ունեցող հազարավոր այցելուներ ընդունել են Գիշերվա եվրոպական համակարգողների <<Նկարի՞ր ինքը>> առաջարկությունը և որսացել Եվրոպայի թանգարանային հավաքածուների հարստությունը ներկայացնող հրաշալի լուսանկարներ: Նախաձեռնությանն ակտիվորեն են մասնակցել Ֆրանսիան, Իտալիան, Ռումինիան, Իսպանիան, Ռուսաստանը, Հայաստանը: Էրեբունի թանգարանը Գեղադիտակում ներկայացված է Արգիշտիի բարձրաքանդակը ներկայացնող 1 լուսանկարով:

2014թ. մայիսի 17-ին <<Էրեբունի >> արգելոց-թանգարան են այցելել 2400 այցելուներ, որոնցից 960-ը՝ 12-25 տարեկաններ:

